

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱՐՈՂ ԵՐԱՐՈՂ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզովով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Չենք խրախուսում.
— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Վրաց թատրոն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր քայլ ևս. Պարսկաստան. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Անցեալ տարի «Մշակի» դադարման պատճառով բաժանորդները մի մեծ թիւ, որ իրաւունք ունէր յետ ստանալ մէկ ռուբլի, թողեց այդ գումարը խմբագրութեան տրամադրութեանը: «Մշակի» խմբագրութիւնը բոլոր այդ բաժանորդներին ուղարկեց «Գրիգոր Արծրունու աշխատութիւնները» առաջին հատորը, որը նա խոստացել էր իր տարեկան բաժանորդներին:

Այն անձինք, որոնք լիակատար կերպով չեն վճարել տարեկան բաժանորդագինը, կարող են ստանալ յիշեալ գիրքը, ուղարկելով խմբագրութեանը մէկ ռուբլի: Խմբագրութիւնը անյապաղ կը հասցնէ նրանց գիրքը առաջին պատուով:

ՉԵՆՔ ԻՐԱՆԻՍՏԱՆ

Մենք առիթներ ենք ունեցել խօսելու այն անտարբերութեան մասին, որ ունի մեր հասարակութիւնը զէպի գեղարուեստի ստեղծագործութիւնները: Մենք արձանագրել ենք շատ անգամ, որ նկարիչը, քանդակագործը, երաժիշտը իրանց ստեղծագործութիւններով մնում են անուշադիր մեր հասարակութեան կողմից, դատաւարութեամբ զրկանքների և մոռացութեան: Եւ զարմանալի չէ, որ, օրինակ, մեր երկրի նկարիչները յաճախ իրանց ապրուստը հայթայթում են այն գումարներով, որ նրանք ստանում են ոչ կովկասեցի գնորդներից: Օտարներն են գնահատում մեր երկրի տեսարանները և ձեռք բերում իրանց համար, մի և նոյն ժամանակ մի որոշ չափով պահպանելով նկարիչներին:

Եթէ մեր հասարակութեան այն մասը, որ արդէն անցել է երիտասարդութիւնը, ընդունակ չէ գեղարուեստը գնահատելու, ինչո՞ւ հոգա չենք տանում, որ գոնէ մեր նոր սերունդը ընտելանայ գեղարուեստին: Ինչու, օրինակ, Ներսիսեան, Անանեան և մեր քաղաքի ուրիշ դպրոցների աշակերտներին չենք տանում ցուցանանքներ և առիթներ տալիս նրանց տեսնել մեր երկրի նկարիչների գործերը: Ինչո՞ւ մեր քաղաքը չէ հետևում եւրօպական մի քանի քաղաքների օրինակին և իւրաքանչիւր տարի ձեռք չէ բերում որոշ քանակութեամբ նկարներ կամ չէ նպաստում պատկերների մշտական գալ-լը՜նէս հիմնելու մեր քաղաքում թէ՛ օտար և թէ՛ տեղական նկարիչների գործերի ժողովածուներով:

Մենք անշուշտ ամենեւին «գեղարուեստը-գեղարուեստի համար» դաւանողներից չենք, բայց լավ գիտենք, որ գեղարուեստին վերապահված է որոշ կուլտուրական դեր հասարակութեան կեանքի մէջ և մենք չը պէտք է անտես անենք այն բոլոր միջոցները, որոնք նպաստում են մեր առաջադիմութեան:

Երբ նրա հասարակութիւնը իր ամբողջութեամբ ապրում է գիտական կամ գեղարուեստական կեանքով, այն ժամանակ գեղարուեստագէտներն էլ, իբրև այդ հասարակութեան գնահատիչներ, համակրում են ընդհանուր ոգևորութեան յատկանիշներով և իրանց ստեղծագործութիւնները մէջ անդադարաբարձում են նրա տրամադրութիւնները և հայեացքները: Ժամանա-

կաւոր շեղումները կորչում են և էականը բնութագրում է իրան վերագրված պատկանելի տեղը:

Գնահատութիւնը, ղեկավարող հայեացքները, հասարակութեան զարգացող ճաշակը կամայ կամաց շտկում են գեղարուեստի սխալ քայլերը և դարձնում նրան զօրաւոր միջոցներից մէկը կուլտուրական առաջադիմութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ո Մ Ո Ւ Լ

Գաղափարին մի տեսակ արդարադատութիւն կայ, որի առջև թոյլերը, իրաւագործները, ընկալները միշտ մեղաւոր են, իսկ ուժիւները, բարեխառնութեան ճարտու ծածկվածները առանձին ներդրումութեան, առանձին արժանութիւնների են արժանի: Կայ ժամանակակից հասարակութեան մէջ աւելի դժբախտ, աւելի կոխկրտված, անասնական դրութեան հասցրած մի մարդ, քան այն կինը, որ վաճառում է իր մարմինը: Եւ գիտէք, այդ պարիսն զեռ մեղաւոր է համարվում... Մի երկու շաբաթ առաջ Պետերբուրգի բժշկական ընկերութեան նիստում բժիշկ Ֆէյնբերգ իր զեկուցման մէջ առանց այլ և այլութեան ապագայի, զայնուհետև ժամանակ չափազանց շատ և չափազանց ոգևորութեամբ զգալովում են պոռնիկ կնոջ անձնաւորութեամբ, իբրև մարդկային անձնաւորութեամբ և համարեա բոլորովին աչքից գցում են, որ հարցը ունի աւելի կարևոր կողմ, այն է մարդու և պոռնիկութեան զէմ, ինչպէս վարակում տարածող մի աղբիւրի զէմ... Պէտք է առ այժմ մոռանալ, որ պոռնիկը կին է և բոլոր ոյժերը ուղղել նրա դէմ կուշտու համար, իբրև վարակման մի աղբիւրի զէմ: Մասնագէտ բժիշկը, ուրեմն, գտել է անուրը հարցի հնչող լուծումը: Բոլոր ոյժերով ընկէք պոռնիկութեան վրա, մոռանալով, որ պոռնիկը մարդ է, և անհասարակութիւնը աղատված կը լինի սարսափելի ակտիւն: Ընդէմ մի և նոյնը, ինչ լինում է երկաթուղու վրա: Սորտակվում է գնացքը, բազմաթիւ գոնիք շարքովում, տարբերվում են: Ամենքը վրդովված են, ամենքի վրա տիրած սարսափը պահանջում է վրէժ, պատիժ, բարեկարգութիւն: Եւ անհասարակութեամբ, դար են դուրս գալիս. բոլոր երկաթուղային վագրերը, բոլոր ոյժ ու իշխանութիւն ունեցողները մաքրաբայլ գտնուկներ են, իսկ մեղաւորը մեր խեղճ, օրհնական մի քանի կօպէկ ստացող բանուորն է, որի ձեռքում է կայարանի մանող գծի սլաքը... Լաւ որ նա խեղճ է, լաւ որ նրա բերանում պղտվաւ չը կայ, որով կարողանայ կտրել, կ'սծիլ հանել: Երկաթուղային այս արդարադատութեամբ արդէն առակի ձև է ստացել: Եւ որովհետեւ նա թէ չափազանց հեշտ է և թէ շատ անփութ է մեծերի և ուժեղների համար, ուստի նրան գործադրում են շատ զէպերով: Ասում են՝ պէտք է ոչնչացնել մուրաքանութիւնը, որ պէս զի հասարակութեան ազատի մի շարք դժբախտութիւններից, ոճերներից: Պէտք է ոչնչացնել պոռնիկութիւնը, որպէս զի երկրորդ այլ ևս քարոքանք չը դառնայ սիֆիլիսից: Ոչնչացնելու համար պէտք է, գոնէ առժամանակ (այս բան էլ խիղճ հանգստացնելու համար է) մոռանալ, որ մուրաքանը, պոռնիկը մարդիկ են: Չը մոռանալ մանաւանդ, որ մեղաւորները միմիայն մուրաքաններն ու պոռնիկներն են...

Պոռնիկ կանանց դէմ անխնայ կռիւ, իբրև սիֆիլիսի աղբիւրի դէմ: Բայց այդպէս է, Այդ հարցն է առաջ մի ուրիշ բժիշկ «Наша Жизнь» լրագրի մէջ:

Ժամանակակից Մոսկովի—վարակի մեղ յանձնարարում են գոն բերել մարդու իրաւունքները, յանձնարարում են մոռանալ, որ պոռնիկը մի մարդ է, կին է: Յանձնարարարում են մոռանալ, որ հասարակութիւնը իր ժամանակակից դրութեան մէջ բազմաթիւ կանանց ստիպում է վաճառել հանել իր մար-

մինը և խնդրում են չը մոռանալ մի բան միայն,—որ այդ ապրանքի ոճադործ գինը պէտք է պաշտպանել վարակից: Մոռանալ... Բայց առաջ, հասարակութիւնը իր սեփական տեսլականներով այդ թղտուտ ստրուկների վերաբերմամբ վաղուց արդէն մոռացել է թէ լօգիկան և թէ ամենատարական սրդարութիւնը:

Եւ ինչպէս չը մոռանալ, Չէ որ բժիշկները—ինչպէս չը հաւատալ դրանց—յայտարարում են, թէ վարակի աղբիւրը պոռնիկ կինն է: Յայտարարում են, մոռանալով, որ ժամանակակից գիտութիւնը հիմք չէ տալիս վարակի «աղբիւր» համարելու պոռնիկութիւն անող կնոջը: Այդ կինը միայն վարակ տարածող է և այն էլ—անասնականութիւն անող տղամարդու հետ հաւասար չափով: Բժիշկներից մեր չը գիտէ, որ պոռնիկ կանայք վարակում են իրանց շրջանը մտնող իւրաքանչիւր գոնիք ոչ թէ ուղղակի, անմիջապէս, այլ տղամարդու միջոցով: Բայց հաճոյացող բժիշկները գիտածով մոռանում են այդ և մի կողմ թողնելով տղամարդուն, որ օգտվում է պոռնիկ կնոջից, որ նրա պէս վարակ է տարածում, եռանդով աշխատում են, որ «առողջացի» պոռնիկութիւնը, պարագայում քանից այդ ամենախայտառակը, որ ստորացնում է երկու կողմերի մարդկային արժանաւորութիւնը—թէ վաճառողին և թէ գնողին: Եւ զեռ մեծ հարց է, թէ այդ կողմերից մի է շատ մոռանում մարդկային արժանաւորութիւնը և արժանի է աւելի յանդիմանութեան և պատժի:—այն կողմը, որ հանգամանքների ստիպմամբ դուրս է շարժվում վաճառողին, թէ այն կողմը, որի համար այդ վաճառքը հաճոյ է, գուարճութիւն է, սանձարձակ կրքերի պատու է:

Պոռնիկ կինը կարող է վարակել միայն նրանց, որոնք գործ ունեն իր հետ: Պոռնիկացու վարակված տղամարդը անարգել տարածում է հիւանդութիւնը հասարակութեան անմեղ մասի մէջ (անմեղ այն մըտքով, որ նա այդ արեւստի մէջ ուղղակի ամանակցութիւն չունի), իր ընտանիքի, իր բարեկեցիկի և ծանօթների մէջ: Այստեղից է անհ մոռանալի պատուհան «անմեղ» ներքին սիֆիլիսը, մեր ժամանակի այդ կենցաղական հիւանդութիւնը: Նրան տարածեցին մոռանալով, որ թէ պոռնիկ կանայք, այլ նրանց յաճախորդները—գիւղերից, պանդխտութիւնից վերադարձող գիւղացիները, մի խօսքով բոլոր դասակարգերի տղա-դարձները, և տարածեցին այնպիսի անհիւանդութիւն, որոնք երբէք, ոչ մի պոռնիկ կին չեն տեսել:

Չը նայած այս հանրածանօթ իրողութեան, հակոդութիւն պահանջվում է միայն պոռնիկ կանանց համար: Այդ ոստիկանական-բժշկական հակոդութիւնն է մի խայտառակ հիւանդութիւն է: Թոյլ, իրաւագործ մի բուն խեղճերին հնչող է եղել ենթարկել այդ հակոդութեան: Իսկ աւելի բազմաթիւ, մի և նոյն մեղքը կողմ տղամարդկանց:

Եթէ մէկը առաջադիւր նոյն բժշկական ընկերութեան, որ գոյութիւն ունեցող ոստիկանական—բժշկական հակոդութեան ենթարկվին պոռնիկ կանանց հետ նաև պոռնիկ տղամարդիկ, եթէ առաջադիւր լինէր որ «առժամանակ» մոռացվի թէ պոռնիկացու տղամարդը մի մարդ է, օ, ինչպէս շուտ այդ հարցը կը թողվէր առանց որ և է նախապատրաստական ընտելութիւնների և նիստերի:

Անպ թէ որքան մեծ է անարդարութիւնը, եւ ինչ, Տղամարդը փառնեցական սկզբունքի վրա հնարել է արտանութիւններ իր համար: Բայց այս անգամ էլ, ինչպէս ամեն մի ուրիշ դէպքում էլ, քնապողը, զոհողը, այլասերվողը հասարակութիւնն է, ուրիշ ոչ որ: Անարդարութիւնը անապին պատիժ է մարդկութեան համար...

ՎՐԱՑ ԹԱՏՐՈՆ

Չորեքշաբթի, դեկտեմբերի 8-ին, վրաց դաստիարակ խումբը, Արքունական թատրոնում, դերասան Գուրնայի բեմադրի համար ներկայացրեց երկու պիէս՝ «Մանկութիւն» հեղ. պ. Գուրնայի և «Արկածներ» թարգմանութիւն նոյն Գուրնայի:

«Մանկութիւն» մտքի և գրականութեան կատարեալ սնանկութեան մի նմուշ էր:

Եւ իբրեւ, ինչու մարդիկ ամեն ճիշդ թափում են հեղինակ հոգակիւր, երբ դա ոյժերից վեր է: Այդ մարդիկը թող կամ խնայեն հասարակութեան շրջը կամ թատրոնական բեմը: Թատրոնական բեմը անձնական հաշիւներ, կուսակցական ծաղրածութեան և պատկերիչների տեղ չէ: Մեղանում պիտի գրեւ շատ դժուար է, իսկ թիւիւր շատ հեշտ, անապաղ պիտի գրամա թխոյներէն է և վ. Գուրնային, այդ տեսակ գրական նմուշներ ամեն ազգութեան գրականութեան մէջ կան:

Այդ տեսակ գրամատուրգ դառնալու համար հարկաւոր է վերցնել մի ընտանիք, որի անդամները կենդանի են, իր շրջապատող բարեկեցիկութեամբ և ծանօթներով, գրել մի քանի կերպեր այդ ընտանիքից, համեմել փողոցային սրամտութիւններով և փիլիսոփայութիւններով, միով բանիւ մի պատկեր, միայն դրա մէջ լինի կնոջ սէրը, սիրականը, ամուսնու նախանձը, լուսնակը, երգը և ատորձականը, այդ բոլորը կապակցեք իրար հետ և կարող էք վայելիլ դրամատուրգի դասինայ պատկեր:

Այսպիսի գէպերում հասարակութեան միակ միլիթարութիւնը այն է, որ այդ օրպական թխած պիէսները մեռնում են հեղինակի կենդանութեան ժամանակ, որին ներկայ է լինում ստիպված և հասարակութիւնը:

Այդպիսի տեսարան էր ներկայացնում չորեքշաբթի պիէսը, դերասանները ամեն կերպ աշխատեցին, բայց լուր: Երկրորդ թարգմանած պիէսը մի փոքր կենդանութիւն մտցրեց, շնորհիւ դերասանների գեղեցիկ խաղի: Թատրոնում բաւական հասարակութիւն կար:

Thaleia

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, դեկտեմբերի 7-ին
Նոյն օրը, երբ ս. Նշանը Սեան պիտի վերադարձնէին, եկեղեցում, պատարագից յետոյ՝ խօսեց զարմանող տեսուչ Գրիգորի վարդապետը. աշխատեց հասարակ ժողովրդեան հասկանալի լիզովով մանրամասնօրէն բացատրել, թէ ինչպիսի հիւանդութիւն է խօսիւրան և առողջապահական ինչպիսի կանոններ պէտք է պահել նրա դէմն առնելու համար, ինչպէս կարևոր է եփ տուած ջուր միայն խմել, եփ տուած ջուր գործածել լուացման և ուրիշ նշան պիտոյների համար, ինչպիսի մարտութիւն պահել և դպրութիւն գործ գնել կենդանութիւնը, հազուադէպ, ամենեւեցին նկատմամբ, ինչպիսի միջոցների դիմել վարակութեանը, և ինչու, և այլն:—Եւ անհ երևանի թղթակիցն ինքու, ի լուր աշխատի հոգակում է, թէ ժողովուրդը անտուճաբան վարդապետներ, մէկը թեմակալ առաջնորդ—կարապետ վարդապետ, միւսը թեմակալ զարդի տեսուչ՝ Գրիգորի վարդապետ, փոխանակ ժողովրդին խօսելու ճշմարիտը, չարիքի դէմ կուշտու ուղիղ ճանապարհը, իրանք աւելի ևս խրախուսող հանդիսացան:—սնտիսպաշտութեան: Եւ ուրեմն բացարձակ հրապարակային սուտ է ասում և անխիղճ կերպով աղաւաղում փաստերն այն դէպքում, երբ հազանակը հաստատելու համար հաղաթաւոր վկաններ կան:—Եթէ խօսել ճշմարիտը և չարիքի դէմ կուշտու ուղիղ ճանապարհը ցոյց տալ, նշանակում է զգուշութեան յորդորել և առողջապահական կանոններ ուսուցանել: Եւ Գրիգորի վարդապետը, ինչպէս տեսանք, արել ենք այդ, որպիսի հնարաւոր է եղել:—մենք օգտուել ենք նոյն իսկ ս. Նշանի քաղաք բերելու առթիւ և խօսել ենք այնպիսի բազմութեան առաջ, որի տանները մասն ուրիշ անգամ դժուար է գտնել Երևանի եկեղեցիներում, խօսել ենք այնպէս, որ սնտիսպաշտութիւն խրախուսող մի խօսք արտասանած լինել չէինք կարող: Չենք վիճում հարկաւ այնպիսիների հետ, որոնց համար նոյն իսկ Աստուծոյ անունը եկեղեցում յիշել, աղօթելու ու շնորհանդութեան հրաբերելը սնտիսպաշտութեան խրախուսանք է: Մի տարվայ պաշտօնավարութեան ընթացքում եւ մի քանի անգամ առիթ եւ ունեցել երեսնի եկեղեցիներում սնտիսպաշտութեան դէմ խօսելու և աշխատել եմ պարզել, թէ ինչ մեծ տարբերութիւն կայ նրա և ճշմարիտ հասարակութեան մէջ, թէ ինչպէս աճում է նա շաճախ հէցն այնպիսի, որ իսկական հասարակ պատկերում է, և այնքան կարգադրութիւններ են եղել իմ կողմից սնտիսպաշտութեան, մանաւանդ օտարամուտ սնտիսպաշտութեան դէմ, որ իմ վերաբերմունքն այս խնդրում ոչ մի

Նա կը փորձէ իր փորձերի ու լուսաւոր պիտոյնի մէջ ընտրովի դաստաւորները սկզբնապէս:

Եթէ փորձը աջող եղաւ, թերեւ ըրոր ֆինացա՞ծ լուսաւոր երկրի երը հետեւն նրա օրինակին:

Առ այժմ Ժընէվի ժողովուրդը համոզված է, որ և ժողովրդի ընտրված պատգամաւորները, և գործադիր իշխանութիւնը պէտք է միշտ գիտակցեն, միշտ զգան, որ իրանցից բարձր մի բան էլ կայ—օրէնքը: Նրանք պէտք է միշտ զգան, որ ժողովրդի ընտրված պատգամաւորները պէտք է գործադրեն այդ օրէնքը՝ ով էլ որ լինի նրան ոտի տակ տուողը—պատգամաւոր, թէ գործադիր իշխանութիւն:

Օրինակութիւնը պէտք է թագաւորէ վարից մինչև վեր:

Խաժակ

Պ Ա Ր Ս Վ Ա Ս Տ Ա Ն

II

Պարսկական հին սովորութեան համաձայն, տիրող արքայական ընտանիքին պատկանող մի անձն չէ կարող կոչվել սեծ վիճակութեան պաշտօնին: Մինչև այժմ տեսնված չէր, որ զաւր ցեղին պատկանող մի շահագէտ ստանայ մեծ վեղիբի պաշտօնը: Այդ պատճառով Պարսկաստանում մեծ զարմանք և շատերի մէջ մեծ դժգոհութիւն առաջացրեց այն հանգամանքը, որ էյն Դովլէն, շահագէտ, այժմեան Շահի հօրեղորորդին, նշանակվեց առաջ մեծ վեղիբ, իսկ յետոյ նաև սադրազամ, որ աւելի ևս զարմանք պատճառեց: Պէտք է ի նկատի ունենալ, որ սադրազամն է հանդիսանում իրապէս երկրի կառավարողը, որովհետև առանց սադրազամի Շահիւր ոչ մի բայլ չեն անում:

Ստանձնելով սադրազամի պաշտօնը, էյն Դովլէն, որը յայտնի է իբրև ճարպիկ և խորամանկ անձն, ինչպէս առնաստիճակ խորամանկ է պարսից ամբողջ ազգանքին, բազմաշաբաթ, չէր կարող հետեւի իր նախորդին, Աթաբէկի քաղաքականութեան, քանի որ ինքն էր եղել նախորդ քաղաքականութեան գործադիր հակառակորդներից մէկը, երկրորդ, այդ քաղաքականութիւնը մեծ դժգոհութիւններ էր յարուցել ամբողջ երկրի մէջ և եղել էր պատճառ Աթաբէկի անկման: Արդ, Աթաբէկի քաղաքականութիւնը շատ ուռնասիրական էր, այն է նրա օրով ուսական բոլոր ծրագրերը Պարսկաստանի վերաբերմամբ անարգել իրազգործում էին: Աթաբէկին հակառակ կուսակցութիւնը աշխատում էր պաշտօնի կասեցնել նրա նախորդին՝ Էյին Դովլային, որի քաղաքականութիւնը՝ հակառակութեան էր, բայց այդ դէպքում, էյին Դովլային սադրազամ կարգելը կը նշանակէր՝ յարուսն ամբողջովին անգլխաւոր քաղաքականութեան: Աւելայի այդ պիտի բայլ անել չէր կարող Շահը, ուստի և նա զիսկ միջին ճանապարհին, որին, սովորաբար, զիստու են բոլոր թոյլ պետութիւնները. նա պաշտօնի կոչեց էյին Դովլէ շահագէտին, որը մինչև այդ յայտնի էր իբրև «բուն պարսկական» քաղաքականութեան ներկայացուցիչ, իսկ «բուն պարսկական» քաղաքականութիւնը կայանում է նրանում, որ պէտք է օգտվել երկու հօր պետութիւնների Ռուսաստանի և Անգլիայի մրցութիւնից ու նաւարկել այդ երկու ժայռերի մէջ: Դա՛ հանգուցեալ Նասրէդդին Շահի քաղաքականութիւնն էր, որին նա հետեց ամբողջ 40 տարի և էյն Դովլէն իր հօրեղորք քաղաքականութեան շնորհ կուսակցին էր:

Ընտրել միջին ճանապարհ—այն նոր սադրազամ քաղաքականութիւնը. նախապատուութիւն տալ ոչ Անգլիային, ոչ Ռուսաստանին, այլ աշխատել մի կողմից՝ թուրքներ երկու պետութիւնների ազդեցութիւնը և միջամտութիւնը, միւս կողմից չը զրգուի նրանցից ոչ մէկին Պարսկաստանի դէմ: Այդ ծրագրերը իրագործելու համար պէտք էր ունենալ նախ քաղաքականութիւնը վերածել իր չէզոք վիճակին, այսինքն պէտք էր ցոյց տալ, որ նոր կառավարութիւնը այլ ևս ուսական ուղղութիւն չը պէտք է ունենայ, իսկ այդ անկուհամար պէտք էր սկզբում հակա-ուսական կամ անգլիական քաղաքականութիւն գործադրել: Այդպէս էլ արեց նոր սադրազամը և զիստութիւններ ընծայեց անգլիական դիպլոմատիային գործելու Պարսկաստանում: Յայտնի է անգլիական դիպլոմատիայի ճարպիկութիւնը, բայց, քանի որ տրամադրութիւնից օգտվելու ընդունակութիւնը նա օգտվեց էյն Դովլէի քաղաքականութիւնից և մի շարք անգլիական ծրագրերի հետադիմ է մշակվեցին ու սկսվեցին գործադրվել:

Սակայն էյն Դովլէն, միւս կողմից, հաւատարմ իր բուն ուղղութեան, չը կամեցաւ գրգռել Ռուսաստանին, ուստի նա թողեց իրանց պաշտօնների մէջ այն պաշտօններին, որոնց նախկին սադրազամ Աթաբէկի օրով նրա աջ բազուկներն էին արտաքին քաղաքականութեան մէջ, այն է արտաքին գործերի միջնորդ Մուշիր Դովլային, սրա որդի Մուշիր Մուլլէին (Պետերբուրգի դեսպան) և Միլլա Ռիզա խանին (Կ. Պոլսի դեսպան): Բնականաբար, նրա քաղաքականութեան մէջ ծագեց երկդիմութիւն և նա այն համաբան ստացաւ, թէ սրտով և համոզմունքով նա անգլիական էր, բայց առ երկոյն իրան չէզոք է ցոյց տալիս և կեղծում է Ռուսաստանի վերաբերմամբ:

Այդ երկդիմութեան պատճառով էյն Դովլէն երթարկվեց զանազան յարձակումների ուսական մամուլի կողմից: Յանդիմանողները հիմնվում են այն փաստերի վրա, որ մինչ էյն Դովլէն յայտարարում է, թէ նա չէզոք քաղաքականութեան է հետևում, սակայն աչքերը դարձնում է Անգլիայի ոտնձգութիւնների վրա, որոնց նպատակն է զբաւել Մէրստանը և առնաստիճակ տնտեսապէս ու քաղաքականապէս նուաճել Պարսկաստանը:

Յաջորդ ահագն մեծ առաջ կը բերեն այդ յօդուածները:

Հ. Ա.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

8 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գինեբալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով դեկտեմբերի 8-ից. «Մեր աջ թիւ վրա կամաւորները դեկտեմբերի 10-ի գիշերը, խուզարկութիւն կատարելով բարտու ծառաստանի մէջ, մեր դիրքից 600 քայլ առաջ, դիմաւորվեցին հակառակորդի հըրացանային զօրեղ կազմով: Ստիպված լինելով յետ նահանջել, ունենալով երկու վերաւորներ, որոնցից մէկը վիրաւորված էր ծանր կերպով, կամաւորները սողալով, մէջքերի վրա դուրս բերեցին ծանր վիրաւորվածին, գնդակահարվելով հակառակորդի կողմից մօտ տարածութիւնից: Դեկտեմբերի 10-ի 3-ի գիշերը կամաւորները նորից փորձ արին բարտու ծառաստանում և, զուրա մղելով հակառակորդին, գրաւեցին նրա մէջ եղած եռազանգային խրամատը: Դեկտեմբերի 10-ի 4-ի գիշերը, առաջ շարժվելով դէպի եռազանգային խրամատը 150 քայլ դէպի հարաւ արեւելք բարդու ծառաստանից, որը չէր գրաւված հակառակորդի կողմից, կամաւորները գտան նրա մէջ ուսական գրված մի նամակ, որով հրապուհում էին մեր զինուորներին գերել ընկնել եռազանգայինի ձեռքը: Դեկտեմբերի 10-ի 6-ի գիշերը կամաւորները դուրս մղեցին եռազանգայինին այն խրամատներից, որոնք պաշտպանում էին երկաթուղի-հակաւորները Նախէյ վրա, և պիլոսկիլինով քանդեցին խրամատներում ընկնողները և հաղորդակցութեան անցքերը խրամատներից դէպի կամուրջը: Այդ ժամանակ մեզ մօտ վիրաւորվեցին 6 զինուոր: Այդ ձեռնարկութիւնը, որը նպատակ ունէր արգելելու ապագայում եռազանգայինների անցնումը երկաթուղիական կամուրջներից, երբ գիշեր շարունակ, հրացանային զօրեղ կրակի տակ, հողով լցված ատարակների օգնութեամբ, պատրաստվում էր պատնէշի կառուցումը՝ կամուրջը մօտից գնդակահարելու համար: Այդ աշխատանքը կատարվեց կայսերան Տէր Աղաօվի նախաձեռնութեամբ և անմիջական ղեկավարութեամբ: Վերոյիշելով մասին ամենահպատակօրէն գեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը: Գինեբալ-լէյտենանտ Սախարովի հեռագիրը զիստուր շտաբին դեկտեմբերի 7-ից. «Այսօր ղեկուցումներ չեն ստացված պատերազմական ընդհարումների մասին ներկայ դեկտեմբերի 7-ին: Տերեկով հիւսիսային փոքր քամու ժամանակ սառնամանիքը 9 աստիճան էր: 10-ի 7-ից, 8 դեկտեմբերի Վէյտերի գործադրութեան» հեռագիրը Նօգի բանակում հաղորդում է, որ Կիկվանշանի բերդապահ զօրք յետ միջոց եռազանգայինի առաջին յարձակումը: Ռուսներին աջողվեց անցկացնել դէպի մարտկոցը, ծածկված գալէթայի միջով, 300 մարդուց բաղկացած օժանդակ զօրքը: 10 ժամ վաղ ընթացքում շարունակվում էր սարսափելի կռիւ մարտկոցին տիրելու համար, որի ժամանակ և ձեռնառումներ: Կէս գիշերին տեղի ունեցաւ ընդհանուր կատաղի յարձակում, որը վերջացաւ մարտկոցի առումով: Միայն 20 հո-

գի ուսներ ազատվեցին, պայթեցնելով իրանց ետեւից 4 ականներ, որոնք աւերեցին գաւրեւն և տղապիտով դադարեցրին հալածանքը: Եռազանգայինը իրանց ձեռքը գլեցին 4 դաշտային թնդանօթ և 3 զնդանօթներ:

ՆԱԿԱՍԱԿԻ, 8 դեկտեմբերի (Րէյտէր), «Նէգրէցիա» շոգենաւը հասաւ Սասերօ. նա կէրօսինի բեռով գնում էր Վլադիվոստօկ: Շոգենաւի էկիպաժը հրաժարվում էր դուրս գալ Շանգայից, բայց անգլիական հիւպատոսը դրդեց նրան դուրս գալ, որովհետև բեռը նրա կարծիքով կօնտրբարանդ չէր ներկայացնում և որովհետև Վլադիվոստօկը պաշարված է:

Կ. ՊՈԼԻՍ, 7 դեկտեմբերի (Կօրբ. Բիւրս). Անցեալ գիշեր այրվեց բոլգարական էկզարքուսութեան դիւանատունը. գործերի մեծ մասը այրվեց:

ՎԻԷՆԱ, 8 դեկտեմբերի. Կառավարչական 4 կոմսարներ ճանապարհ ընկան Բերլին քաղաքակցութեան վերսկսելու համար առետրական դաշնագրի մասին Գերմանիայի հետ: Դեկտեմբերի 11-ին պատուիրակները նորից վերադառնում են Վիէնա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կայսերական ուսական թատրոնական ընկերութիւնը ձեռնարկում է սեփական ամսագրի հրատարակութեան Պետերբուրգում, նուրբված թատրոնական գործի բոլոր ճիւղերին: Հրատարակութեան նպատակն է աւելի սերտ կապ պահպանել բեռական գործիչների և թատրոնական ընկերութեան միջև: Մեծ պատիւ Մօսկվայում, արտասերի ընդհանուր համագործակցի ժամանակ, լոյս կը տեսնի շաբաթ մի քանի անգամ տեղեկատուի բնակարանի ռուսացող յաւելումներ:

Նէգուս Մեհմէթը նուրբից 100,000 Ֆրանկի նպաստ հիւանդ և վիրաւոր զինուորների Հեռաւոր Արեւելքում:

9 դեկտեմբերի

ՏՈԿԻՈ, 8 դեկտեմբերի (Րէյտէր). Ըստ երեկոյթին դեռ ևս չէ պարզվում, թէ արդեօք ռուս օֆիցէրներ գտնվում են «Նէգրէցիա» շոգենաւի վրա: Եռազանգայինը մանրամասն ճիշտում են այդ դէպքը, որովհետև այդ հարցը, թէ արդեօք Ձինաստանը կարող է կատարել իր յանձն առած պարտաւորութիւնը չինական հողի վրա ընկած ռուս օֆիցէրների վրա հըսկելու համար, էական նշանակութիւն ունի: «Մանչժուար» շոգենաւը դուրս է գալիս դէպի Պօրտ-Արտուր մօտ դեկտեմբերի 13-ին օտարազգի ժողային գործակալներով և եռազանգային պարլամենտի ներկայացուցիչներով: Գնալու նպատակն է առիթ տալ ժողային գործակալներին տեսնելու դիւտողութիւններ կատարել: Գերի ուսանելը Պօրտ-Արտուրից հաղորդում են նոյեմբերի 21-ից, որ լէյտենանտ կոմս Բէնկէնդօֆ, Լօնդօնի ուսաց դեսպանի որդին, առողջ է:

ՆԻՄԻՐՈՎ, 8 դեկտեմբերի: Իշխանուհի Շէյր-բատովա իր նմիրովեան կալուածքում, երկաթուղու կայարանի մօտ հիւանդանոց սարքեց 20 մահապաշտով վիրաւորների համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբերի: Բացված է բժիշկների ընկերութիւն: Նրա նպատակներ թիւում մտնում է, ի միջի այլոց, նահանգի ուսումնասիրութիւնը սանիտարական տեսակէտից, առողջապահութեան մասին առողջ հասկացողութիւնների տարածումը, բորձերներին հրատարակութիւնը և գիտական հաղորդագրութիւններ ու ընթերցանումներ:

ՆՈՒՈՒ, 8 դեկտեմբերի: Սինան ընդունեց առևտրական դաշնագիրը Շվեյցարիայի հետ:

ՊԱՐԻՉ, 8 դեկտեմբերի: Ծովագետ Դէվիս, Միացեալ-Նահանգների ներկայացուցիչը Հուլի յանձնաժողովում, այսօր երեկոյեան ժամանեց Բերլին:

Դեկտեմբերի 8-ին բոլգարական դիպլոմատական գործակալ Նիկիֆօրով յանձնեց կայսերին բոլգարական իշխանի ինքնագիր նամակը, որի մէջ վերջինը շնորհակալութիւն է յայտնում կայսրին Բերլինում բոլգարական դիպլոմատական գործակալութիւն հիմնելու թոյլտւութիւնը տալու համար:

9 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Դեկտեմբերի 3-ին Չէրնիգօվի նահանգի չէրնիգօվեան նահանգական ղեկավարի ժողովի նախագահը, ազնուականութեան պարագլուխը ներկայացրեց հեռագրով Նորին Կայսերական Մեծութեան վերոյիշել ժողովի միջնորդութիւնը ընդհանուր պետական բնակարաններ ունեցող մի ամբողջ շարք հարցերի վերաբերմամբ: Այդ հեռագրի վրա Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց Սեփական Ձեռքով գծագրել:

«Ձերնիգօվեան նահանգական ղեկավարի ժողովի նախագահի վարմունքը զգնում եմ յանդուգն եւ անսակա: Ձեկնվողի ժողովների գործը չէ գրաւվել պետական վարչութեան հարցերով, որոնց գործունեութեան եւ իրաւունքների եղանք պարզորոշված է օրէնքներով»:

10-ի 8-0 ՄԱՐԿԵՉԷ, 8 դեկտեմբերի (Րէյտէր): Այսօրիկ նուաճանգաւում գտնվում են հինգ ամխատար նաւեր, որոնցից անգլիական երկու նաւ վարձված են գերմանեան ծովային ընկերութեան կողմից:

ՏԱՆԺԷՐ, 8 դեկտեմբերի (Րէյտէր): Մանչուրիայում ուսական արտիլերիան Տաշոնից դէպի արեւելք դեկտեմբերի 7-ին ուղարկեց Միստունի շվախները: Առաւօտեան 4 ժամին ուսական հետեւի զօրքը յարձակում գործեց Ձինչաստանի, Ուլլինդունի և Ուուսագիլի վրա: Ռուսները կատարելապէս յետ մղեցին:—Հիւսիսային Կիկվանշանի մարտկոցն առնելու ժամանակ եռազանգային կորուստները հաշոււ են 400 մարդ:

10-ի 7-0, 8 դեկտեմբերի (Րէյտէր): Գործակալութեան թղթակիցը եռազանգային բանակում Պօրտ-Արտուրի մօտ առում է, որ հիւսիսային Կիկվանշանի մարտկոցի գրաւումը մեծ նշանակութիւն ունի եռազանգայինի համար, որովհետև գրաւումը բացվում է ճանապարհը այն հովտի վրայով, որը գտնվում է արեւելեան Կիկվանշանի և վերջված մարտկոցի միջև: Մարտկոցի գրաւումը դիւրացնում է նոյնպէս արեւելեան Կիկվանշանի առումը: Առաջապահ 7 մարտկոցներից եռազանգայինների ձեռքում են այժմ հինգ մարտկոցներ:

10-ի 7-0, 9 դեկտեմբերի (Րէյտէր): «Նէլի Տելեգրաֆ» լրագրի թղթակցի հաղորդագրութեան համաձայն դեկտեմբերի 8-ից, ուսական ուսման դեկտեմբերի 7-ին եռազանգային ուսման պայթիւն առաջացրեց 203 մետրանոց բլրի վրա, որի ժամանակ վիրաւորվեցին մեծ քանակութեամբ զինուորներ:

ՉԻՅՈՒ, 8 դեկտեմբերի (Րէյտէր): Չորս օր առաջ ձինսխաւան բուրի ժամանակ Պօրտ-Արտուր եկաւ «Նէլի Նիտէլ» շոգենաւը, որը լողում է անգլիական դրօշակի տակ Նօրվէ-գրական էկիպաժով, որը դուրս է եկել Դիւնդաօից ռազմաւթերների և զինամիտրի բեռով: Լուր է պտում, որ եռազանգայինը ստիպված էին յետ բաշվել Յիուշանից արել մարդկոցների կողմնակի կրակի և ուսական առկանների պայթիւնից առաջ եկած մեծ կորուստների պատճառով: Հասկացնում են, որ զինեալ Նօգի խնդրել է 60,000 օժանդակ զօրքեր. նրա քանակն ուղարկված են արդէն մի քանի հազար կօրէացիներ. եկան նոյնպէս զօրքեր հիւսիսից:

ՇԱՆԳՀԱՅ, 8 դեկտեմբերի (Րէյտէր): Պէկինի եռազանգային դեսպանի Տօկիօ ուղևորվելը նշան են համարում, որ ներկայումս նոր համաձայնութիւններ են կայանալու Ձինաստանի և եռազանգային շահերի աւելի սերտ մերձեցման համար:

ԿՈՎԱ, Կօնստանտնուպոլիսի զգուցանքի սուսցիչները և ուսուցչուհիները ժողովը, տեսնել Մցեպուրի նախագահութեամբ, մշակեց մի շարք բարդաւորական, ժամանակակից գիտութեան պահանջներին համապատասխան մանկավարժական որոշումներ պատիժների, պարգևների և թանաշանների մասին վերջինները ցանկալի է համարված բոլորովին վերացնել:

ՕՐԷՈՒ, Նահանգական ժողովը հաստատեց ղեկավարի նախաճաշիւր 1905 թիւ համար 716,307 ռ. գումարի: Առաջին տեղը բռնում է բժշկութիւնը—30% և ճանապարհային հարկը—270%, իսկ ժողովրդական կրթութիւնը միայն 40%:

ԲԱՆԱ, Եւսաօլեան գաւառում տեղի բէն-նէտի, ծնեալ իշխանուհի Արամէլիքի միջոցներով բացված է հիւանդանոց 12 մահապաշտով վիրաւոր զինուորների համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գինեբալ-ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը 1904 թուի դեկտեմբերի 8-ից. «Ձինացիները հաղորդում են, որ Պօրտ-Արտուրի բերդապահ զօրքին աջողվեց նորից դրաւել 203 մարդ բարձրութիւն ունեցող բլուրը՝ նրա վրա գրաւված թնդանօթներով:—Այս գիշեր եռազանգային կամաւորները, թուով 40 հոգի, յանկարծական յարձակման փորձ արին մեր գրաւմունքներից մէկ խմբի վրա: Թշնամու նախապատրաստութիւնները, որոնց մասին իմացված էր առաջուց, հնարաւորութիւն տուին յարձակման առաջն առնելու: Մեր պահանկ-

Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ», Мад. ул. № 15.